

ԱՆՉԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՍԱՑԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԻՄԱՍՏԱՌՃԱԿԱՆ ԲՆՈՒԹԱՎԳԻՐԸ

Հոդվածը նվիրված է անգլերենի և հայերենի ասացական բայերի հարանշանակային իմաստների ուսումնասիրությանը: Սեր ուսումնասիրության կենտրոնում են ինչպես այն բայերը, որոնց համար ասացական իմաստը հիմնական է /օր. անգլերենում՝ chat, converse, discourse, maunder, tumble, հայերենում՝ ասել, զրուցել/, այնպես էլ այն բայերը, որոնց համար ուսումնասիրվող իմաստը փոխաբերական է կամ բնածայնական /bark, coo, մռթմռթալ, ճլվլալ/:

Հոդվածի խնդիրներն են.

1/ ասացական բայերի հիմնանշանակային իմաստներ կազմող բաղադրիչների բնորոշումը. այս տեսակետից հետաքրքրական է ուսումնասիրել ասացական բայերի դասակարգումն ըստ հարանշանակային իմաստը կազմող տարբեր բաղադրիչների,

2/ ասացական բայերի դասակարգումն ըստ իմաստային և որոշ կառուցվածքային չափանիշների:

Պետք է նշել, որ հոդվածում արծարծվող նյութը հիմնված է հետևյալ ելակետային դրույթների վրա.

ա/ ուսումնասիրվող լեզուների ասացական բայերի մեծ մասը իրենց մեջ որոշ չափով ներառում են գնահատողական բաղադրիչներ, այսինքն՝ այդ բայերի մեծամասնությունը գնահատողական իմաստ ունի՝ դրական կամ բացասական,

բ/ ժամանակակից անգլերենում և հայերենում լայն տարածում ունեն բնածայնական ասացական բայերը,

գ/ հատկանշական է, որ հարանշանակային ասացական բայերի շարքում մեծամասնություն են կազմում պատկերավոր էքսպրեսիվները: Ուժգնացող և պատկերավոր ուժգնացող /պատկերավոր-ինտենսիվ/ էքսպրեսիվները փոքրաքանակ են:

Ակնհայտ է, որ մտավոր-տրամաբանական գնահատման իմույթները կազմում են հիմնանշանակային և բուն լեզվական արժեքների բաղադրիչ մասը:

Ինչ վերաբերում է հուզական գնահատողական իմույթներին, ապա նրանք «հարանշանակային» բայի բաղադրիչ մասն են կազմում:

Ասացական բայերի ցանկը կազմվել է բացատրական բառարանների սահմանումների հիման վրա:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառիմաստի հարանշանակային երանգը կազմող բաղադրիչը ներկայացվում է հույզ կամ զգացմունք արտահայտող բառով: Հուզականության ինույթն առանձնացվում է բաղադրական վերլուծության ժամանակ:

Օրինակ

fling = to say sth agressively (with strong feelings)

groan - to say sth with a suffering voice (feeling pain, sorrow)

purr = to speak with satisfaction (the feeling of pleasure)

մռնչալ = զայրագին բացականչել (սաստիկ զայրացած)

մրմնջալ = մեղմ ծայրով խոսել (չափավոր, հանդարտ, ոչ զրգռված)

ճլճլալ = ուրախ ու զվարթ խոսել (ուրախության զգացմունքի արտահայտություն):

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր բառ որոշակի տեղեկություն է հաղորդում իր իմաստաբանական կառուցվածքի մեջ հարանշանակային հայեցակետի գործառական-ոճական ցուցիչի առկայության շնորհիվ: Բառի ուժգնացող արտահայտչականության դրսևորման համար հիմք է ծառայում նրա նշանակության հիմնանշանակային և բուն լեզվական արժեքներում ուժգնացման ինույթի առկայությունը: Բառն ունի պատկերավոր արտահայտչականություն, եթե «խոսելու» իմաստը հիմնված է փոխաբերության կամ բառի բնածայնական ծագման վրա:

Արտահայտչականության այս երկու ձևերը /պատկերավոր և ուժգնացող/ հիմք են հանդիսանում բառային արտահայտչամիջոցների երեք խմբերի տարբերակման համար՝

1/ բառեր, որոնց արտահայտչականությունը հիմնված է պատկերավորության վրա՝ պատկերավոր արտահայտչամիջոցներ՝ coo- 1) to talk amorously or friendly in murmurs, 2) to say sth in a gentle voice,

2/ բառեր, որոնք ունեն ինտենսիվ արտահայտչականություն՝ ինտենսիվ արտահայտչամիջոցներ՝ howl – to say sth. loudly and angrily,

3/ բառեր, որոնց արտահայտչականությունն ունի խառը բնույթ՝ պատկերավոր - ինտենսիվ արտահայտչամիջոցներ՝ bray - to say sth. loudly with harsh voice, կոկոռալ – 1) փիսք. չարախոսել, 2) չարագուշակ բան ասել:

Հարկ է նշել, որ հայերենում գերակշռում են փոխաբերության վրա հիմնված ասացական բայերը, օր.՝ մռնչալ - բարձր ծայն արձակել, ֆշշացնել – ցածրածայն, զայրույթը զսպելով մի բան ասել:

Դիտարկելով փոխաբերությունը որպես սուբյեկտիվ գնահատողականության տարածված միջոց՝ հանգում ենք այն եզրակացության, որ անգլերենում և հայերենում գերակշռում են հուզական տիպի ասացական բայերը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ասացական բայերի իմաստային կառուցվածքում գնահատման հուզական տեսակը հաճախ միահյուսվում է մտավոր–տրամաբանական գնահատման տեսակի հետ, այսինքն՝ ասացական հարանշանակային բայերի գնահատողականությունը ներթափանցում է նրանց նշանակության ինչպես հիմնանշանակային, այնպես էլ հարանշանակային հայեցակետերը:

Հատկանշական է, որ ասացական բայերի գնահատողականությունը կախված է դրանց իմությանից կառուցվածքից և պատճառաբանվում է ածանցյալ իմաստով:

Ասացական «հարանշանակային» բայերի միջև գոյություն ունեն փոխադարձ կապի հետևյալ տեսակները.

- 1) սերող նշանակությունը գնահատման իմույթ չունի, ածանցյալ նշանակությունը գնահատողական է,
- 2) սերող նշանակությունը գնահատողական է, ածանցյալ նույնպես գնահատողական է:

Օր.՝ bark բայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա սերող իմաստը գնահատողական իմույթ չի պարունակում.

bark – 1) (about dogs) to give short sharp harsh sound

Իսկ նույն bark բայի ածանցյալ իմաստը ունի գնահատողական երանգ.

bark – 2) to say smth. in a sharp, harsh voice

Հայերենում «հաչել» բայը նույնպես իր սերող իմաստով գնահատողական չէ, իսկ ածանցյալ իմաստով գնահատողական է,

հաչել – 1) (շան մասին) հաչոց արձակել.

- 3) (փխբ.) վալրիվերո խոսել, զագրախոսել, վալրահաչել:

Ուշագրավ է, որ բնության, կենդանիների, ֆիզիկական երևույթների ձայներ նմանակող բայերը պարունակում են զրոյական գնահատողականություն, որը սակայն փոխաբերության մեջ կարող է դառնալ դրական կամ բացասական:

Օր.՝ crow – to utter with a shrill cry,

մռնչալ – ուժգին ձայնով գոչել, խոսել:

Մի շարք դեպքերում սերող նշանակությունը պարունակում է գնահատողական իմույթ, որը, պահպանվելով փոխաբերության մեջ, դառնում է ածանցյալ նշանակության բաղադրիչ: Դրանք այն բայերն են, որոնց սերող նշանակության հիմք են կազմում մարդու ոչ ճարպիկ, անհարմար շարժումների, գործողությունների անվանումներ:

Օր. fumble – 1) to use one's hands or fingers awkwardly.

2) to hesitate in speaking, to mutter.

Ասացական «հարանշանակային» բայերի մեծ մասի նշանակությունը պարունակում է հուզականության բաղադրիչ, որը կարող է երևան գալ փոխաբերության արդյունքում:

Չետաքրքրական է, որ sputter բայի փոխաբերական նշանակության մեջ շեշտվում է խոսելու ծայնային, հնչյունային կողմը.

sputter – to speak or say smth. in a confused explosive manner,

to speak or talk hastily and confusedly or disjointly.

Առանձնացվում են մի շարք դեպքեր, երբ հուզականությունը առաջանում է փոխաբերության արդյունքում: Օրինակ՝ thunder «որոտալ, թնդալ» բայը /ամպրոպի մասին/ հուզականության իմույթ չի պարունակում: Սակայն այն առկա է «խոսել» փոխաբերական նշանակության մեջ:

thunder – (fig.) to speak in a way of vehement threatening (filled with strong, shouting or eager feelings)

hiss – 3) to say smth. with a quiet angry voice

pop – 2) to speak in a burst of vehement, anger

Գայերենի բայերն ունեն հետևյալ իմաստները

որոտալ – 1/ որոտի ծայն հանել, որոտալ,

2/ դղրդալ,

3/ թնդալ, բարձր ծայնով հնչել,

4/ փխբ. սպառնալից ծայնով գոռալ, գոչել:

Ֆշշացնել բայն ունի հետևյալ իմաստները՝

1/ ֆշշոց հանել,

2/ փխբ. զայրույթ արտահայտել լուռ ձևով,

3/ ֆշշոց թափել,

4/ ցածրածայն, զայրույթը զսպելով մի բան ասել:

Պետք է նշել, որ «որոտալ»-ը ի տարբերություն «ֆշշացնել» բայի չունի «խոսել» իմաստը: Մյուս կողմից «ֆշշացնել» բայն իր 4-րդ՝ փոխաբերական իմաստում պարունակում է հուզականություն:

Ասացական «հարանշանակային» բայերը պարունակում են իմույթներ, որոնք բնութագրում են խոսողի տարբեր հուզական վիճակները: Ըստ դրա տարբերակվում են վախի, ծանծրույթի, չարության, գրգռվածության, սիրո և այլ իմաստներ արտահայտող բայեր:

Ասացական հարանշանակային բայերի իմաստային կառուցվածքում գործառական-ոճական ցուցիչների առկայության շնորհիվ նշվում են նրանց օգտագործման ոլորտները: Վերլուծված բայերի մեծամասնությունը պատկա-

նում է գրական-կանոնարկված ոլորտին: Բայերի մի որոշ մասն էլ ունի ոճական նշույթավորում:

Գործառական-նորմատիվային բաղադրիչ պարունակող ասացական բայերն ունեն նաև այլ հարանշանակային հատկություններ՝ արտահայտչականություն, հուզականություն, զնահատողականություն: Միայն գործառական բաղադրիչ պարունակող բայերը փոքրաթիվ են: Դրանց շարքում են՝

converse-(fml) to talk to sb especially in an informal way,

discourse-(fml) to give a long talk about sth,

enunciate-(fml) to advise sb strongly, to urge sb by words

Ինչպես արդեն նշվել է, ասացական բայերի հիմնական մասը գործառական-ոճական նշույթավորում չունի: Բայց գեղարվեստական տեքստերում նրանց կիրառման վերլուծությունը վկայում է, որ նրանցից շատերը մոտենում են բառապաշարի խոսակցական ոճին: Երբեմն դժվար է հստակ սահմանագատել ընդհանուր գրական-խոսակցական բառապաշարը և ոճական առումով չեզոք բայերը, քանի որ այդ խմբերն ունեն փոխադարձ ներթափանցման հակվածություն:

Անգլերենում և հայերենում ասացական բայերը կարող են դասակարգվել ըստ տարբեր չափանիշների: Ուսումնասիրված նյութը հնարավորություն է տալիս դասակարգել ասացական բայերը, օրինակ, ըստ խոսելու, արտահայտվելու ընթացքում ձայնի ուժգնության փոփոխությունների: Այսպես՝ անգլերենում՝

bleat- to speak in a weak or complaining voice,

cackle- to talk noisily,

հայերենում՝ շնչալ- ցածր ձայնով խոսել, մի բան ասել,

բղավել- մեկի վրա բարձր ձայնով խոսել:

Ասացական բայերը կարելի է տարբերակել նաև ըստ ձայնի ուժգնության աստիճանի: Հետաքրքրական է նաև հետևյալ դասակարգումը՝ ըստ խոսքի ընկալման չափանիշի: Օրինակ՝ անգլերենում՝

babble- to talk quickly and in a way that is difficult to understand

հայերենում՝

քրթմնջալ- քթի տակ ցածրաձայն խոսել:

Ըստ ձևաբանական գործոնի դասակարգումը թույլ է տալիս անգլերենի բոլոր բայերը բաժանել երկու խմբի՝

1/ անվերջաձայն բայեր,

2/ վերջաձայնավոր բայեր, որոնց շարքում կարելի է առանձնացնել հետևյալ ենթախմբերը՝

ա/ -er վերջաձայնավոր բայեր. օր՝ chatter, gibber

բ/ -ate վերջաձայնավոր բայեր. օր՝ indicate, enunciate.

Հայերենի բայերն ըստ կազմության լինում են՝

1/ վերլուծական.

օր՝ խոսք անել- խոսել,
խոսք ասել- խոսել,
խոսք բանալ – սկսել խոսել.

2/ համադրական.

օր՝ գրուցել, ճառել, երգել, պատմել, քրթմնջալ, ճվվալ, կատակել:

Ներկայացված նյութը թույլ է տալիս եզրակացնել, որ անգլերենի և հայերենի ասացական բայերը ոչ բոլոր դեպքերում են համընկնում իրենց հիմնանշանակային կամ հարանշանակային իմաստներով:

1/ Բազմաթիվ են այն բայերը, որոնք ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում ասացական իմաստ ունեն.

օր՝ chirp – to speak in a quick slightly way
ժվժվալ - բարակ, ժվժվան ծայրով խոսել:

2/ Առանձնացվում են նաև բայեր, որոնք երկու լեզուներում էլ ասացական են, սակայն դրանք տարբերվում են իմաստային նրբերանգներով.

օր՝ maunder – talk in a boring or complaining way
փնթփնթալ – քթի տակ ցածրածալ խոսել:

3/ Զիչ չեն նաև բայերը, որոնք իրենց բնույթով չեն զուգադիպում երկու լեզուներում:

Օրինակ՝ անգլերենի sing բայը զուրկ է ասացական իմաստից, մինչդեռ հայերենի «երգել» բայն իր իմաստային կառուցվածքում ունի հարանշանակային երեք ասացական իմաստ.

երգել – 4/ գովերգել, փառաբանել /ոտանավորով, երգով,
երաժշտությամբ ևն/

5/ փխբ. շատ անգամ մույն բանը կրկնել, ասել,

6/ փխբ. /արհմրհ./ անխրախուսելի՝ անախորժ՝ հավանության անաղժան բաներ ասել:

Մյուս կողմից հայերենի «հևալ բայը», ի տարբերություն անգլերենի gasp բայի, չունի ասացական իմաստ.

Gasp- to say sth while breathing quickly :

Գրականություն

Է.Բ.Աղայան Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976

Oxford Advanced Learner's Dictionary 1996 fifth edition